

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԵՐՎԱԹ ԶՈՒՄԱ ԱԲԴԱԼԼԱՀ ՕՍՄԱՆ**

ԳՐԱԿԱՆ ԱՐԱՔԵՐԵՆԸ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.  
ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

**Ս. Բ. Կարաբեկյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

**Օ. Ի. Ռեդկին**

քանասիրական գիտությունների  
թեկնածու

**Ա. Ե. Հակոբյան**

Առաջատար կազմակերպություն՝ Կահիրեի արաբերենի ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունվարի 29-ին, ժամը՝  
15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող  
ՀՀ ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում (հասցեն՝  
0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան  
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. դեկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բ.գ.թ., դոցենտ

**Ն. Մ. Սիմոնյան**

**Ատենախոսության ընդհանուր բնութագիրը**

## **Հետազոտության առարկան և նպատակը**

Արաբ գիտնականներն ու մտավորականների լայն շրջանակները մշտապես շեշտել են բնական գիտությունների դասավանդումը արաբերենով իրականացնելու անհրաժեշտությունը: Արաբական շատ երկրներում բազմիցս գումարվել են կարևոր համագումարներ և սեմինարներ, որտեղ ընդունվել են այս գործընթացին էականորեն նպաստող որոշումներ, և ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ այդ որոշումները կյանքի կոչելու համար: Միաժամանակ դա հանգեցրել է արաբական երկրներում գործող լեզվի ակադեմիաների համախմբմանը, որոնց համատեղ ջանքերով ստեղծվել են հատուկ կենտրոններ, որտեղ արաբերեն են թարգմանվել գիտական բազմաթիվ տերմիններ՝ նպաստելով գիտության ասպարեզի արաբականացման գործընթացին: Սկսած անցյալ դարի 80-90-ականներից՝ արաբականացման շարժումը զգալի առաջընթաց արձանագրեց, որի արդյունքում արաբական որոշ երկրների (Սիրիա, Սուդան, Իրաք, Լիբիա և այլն) համալսարաններում բնական գիտությունները արաբերեն դասավանդելու լուրջ փորձեր կատարվեցին: Յավոք, 1990-ականների վերջերից Իրաք ամերիկյան ներխուժման և արաբական աշխարհում քաղաքական ու տնտեսական զանազան ճգնաժամերի պատճառով արաբականացման շարժումն աստիճանաբար անկում ապրեց: Ամենավտանգավորն այն է, որ ներկայումս արաբականացման շարժումն անուշադրության է մատնված և երբեմն մերժվում է անգամ արաբական հասարակության կողմից:

Սույն հետազոտության նպատակն է համեմատական քննության առնել արաբական տարբեր երկրներում լեզվական քաղաքականության առանձնահատկությունները՝ վերհանելով այդ քաղաքականության վրա ազդող գործոնները:

### ***ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ***

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետազոտությունն ամբողջական կերպով անդրադառնում է գլոբալիզացիայի դարաշրջանում արաբական տարբեր երկրներում արաբերենի գործառության առջև ծառայած խնդիրներին: Մարտահավերժերը, որոնց այսօր դիմակայում է արաբերենը, ծառայել են ոչ միայն արաբերենի, այլև շատ այլ ազգային լեզուների առջև: Դրանք

հաճախ վտանգում են ոչ միայն լեզուն, այլև ազգային ինքնությունը: Ասել է թե՛ արաբական փորձի ուսումնասիրությունը կարող է գործնական կարևոր նշանակություն ունենալ գլոբալիզացիայի պայմաններում լեզվական քաղաքականության ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու տեսանկյունից նաև այլ ազգային համակարգերում:

### ***ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ***

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

ա) լեզվական և մշակութային գլոբալիզացիայի համատեքստում գնահատել արաբերենի ներկայիս իրավիճակը և պարզել, թե որոնք են արդի ժամանակաշրջանում դրա առջև ծառայած մարտահրավերները,

բ) վեր հանել ազգային ինքնությանն առնչվող այն խնդիրները, որոնք արդյունք են առանձին գիտակարգերի՝ օտար լեզուներով դասավանդման,

դ) ներկայացնել արաբական երկրների լեզվական քաղաքականությունը արդի փուլում,

ե) բացահայտել այն վտանգները, որոնք կարող է ունենալ բնական գիտությունների ոչ արաբերենով դասավանդումը:

### ***ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ***

Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում ամբողջական պատկերով, ընդգրկելով արաբական տարբեր երկրները, ներկայացնել գլոբալիզացիայի դարաշրջանում արաբական լեզվամշակութային ինքնության պահպանման և զարգացման խնդիրները կրթական համակարգում, վերլուծել դրանց համակարգային պատճառները և առաջարկել լուծումներ, որոնք լեզվական պատշաճ քաղաքականության իրականացման պարագայում կարող են մի կողմից՝ չեզոքացնել գլոբալիզացիոն գործընթացներից առաջացող վտանգները, մյուս կողմից՝ վերաուղղել այդ գործընթացների հզոր ազդեցությունն ազգային լեզվի և մշակույթի՝ համաշխարհային ընթացքին համապատասխանեցնելու կարևորագույն խնդրին:

### ***ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ***

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը կազմում են գիտական հետազոտության իմացաբանական հիմքերը,

պատմահամեմատական, պատմավերլուծական քննության, միջգիտակարգային հետազոտության մեթոդները, որոնք ապահովում են ատենախոսության շրջանակներում ավարտուն ուսումնասիրություն՝ հետազոտական համապատասխան ելքերով:

Աշխատանքի տեսական գործիքակազմը հիմնվում է Ալի Աբդուլվահիդ Ուաֆիի, Սալիմ Յաֆուֆի, Ալի Ահմադ Մադքուրի, Սայյիդ Աբդուլագիզ ալ-Բիհուաշիի, Աբդուլռահման Օմար ալ-Մահիի, Աբբաս Մահմուդ ալ-Աքքադի, Ջարիր Մուհամմադի, Նիհադ ալ-Մուսիի, Իբրահիմ ալ-Սամիրայիի, Իբրահիմ Քայիդ Մահմուդի և Մունա ալ-Ռումիիի, Իբն ալ-Նադիմի, Ալ-Բալազուրիի, Ալ-Ջահշայարիի, Լուի Ամիլի Սեդիլոթի, Իբն ալ-Քիֆտիի, Թաուֆիկ Սուլթան ալ-Յուզբակիի, Իբն Աբի Ուսեյբայի, Մուստաֆա Աուդ բն Ջիյաբի, Աֆիֆ Օսմանի, Ջահիր Ահմադ ալ-Սիբայիի, Մաուլուդ Նայիթ Բիլկասիմի, Իբրահիմ ալ-Սամիրայիի, Կասիմ Օսման Նուրի, Ալի ալ-Կասիմի, Աբդ ալ-Կադիր ալ-Ֆահրիի, Իբրահիմ Բայումի Մադքուրի, Աբդ ալ-Սաբուր Շահինի և Հասան Ջազայի արևելագիտության խորհրդային դպրոցի ներկայացուցիչ Վ. Բարտոլդի և Ու. Դուրանթի աշխատություններում ձևավորված մեթոդաբանական մոտեցումների և հայեցակարգային դրույթների վրա:

### ***ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ***

Ատենախոսության հիմնադրույթներն ու հարցադրումները կարող են օգտակար լինել լեզվական քաղաքականությամբ զբաղվող հաստատություններին իրենց համեմատական վերլուծություններում և քաղաքականության մշակման հարցում, ինչպես նաև նպաստել առանձին համալսարաններում լեզվական քաղաքականության վերանայմանը: Ծանոթությունը արաբական փորձին կարող է օգտակար նյութ ծառայել նաև Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականություն մշակող համապատասխան ազգային և համալսարանական կառույցների համար:

### ***ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ***

Ատենախոսության մի շարք դրույթներ և հետևություններ հրապարակվել են Երևանի պետական համալսարանի արաբագիտության ամբիոնի կողմից հրատարակվող «Արաբագիտական

ուսումնասիրություններ» և Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի կողմից հրատարակվող «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն և բանասիրություն» պարբերական ժողովածուներում, ինչպես նաև գիտական զեկուցումների և գիտական նախագծերի ձևով ներկայացվել են ԵՊՀ արաբագիտության ամբիոնում 2015-2017 թթ. կազմակերպված գիտաժողովների և սեմինարների ընթացքում:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և երկու հավելվածներից:

**Ներածության** մեջ ներկայացվում են ատենախոսության հիմնական հարցադրումները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, լուսաբանվում են թեմայի արդիականությունը, հետազոտական խնդիրներն ու նպատակը, տրվում է օգտագործված գրականության համառոտ նկարագիրը:

**Առաջին գլուխը**, որը վերնագրված է «**Արաբերենը գլոբալիզացիայի դարաշրջանում**», բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցից առաջինում՝ **Արաբերենի և արաբական ինքնության կապը**, անդրադարձ է կատարվում «լեզու» և «ինքնություն» հասկացություններին: Ներկայացվում են լեզվի և մտածողության կապին առնչվող մի շարք տեսություններ, որոնցից են ա) «լեզվի իմացաբանական (կոգնիտիվ) կոնցեպցիան», որը լեզուն համարում է պատասխանատու մարդկային մտածողության համար, բ) «լեզվի հաղորդակցական կոնցեպցիան», որի համաձայն՝ լեզվի միակ գործառույթը միտքը մեկից մյուսին փոխանցելն է, և մտածողությունն ինքնին փոխանցման միջոցներից անկախ է տեղի ունենում, գ) Ուորֆի՝ լեզվաբանական հարաբերականության վարկածը, ըստ որի՝ լեզուն ծառայում է որպես շրջապատող միջավայի տարբերությունների նկատմամբ ուշադրություն հրավիրող միջոց և գործում է որպես պիտակ՝

այդ տարբերությունները հիշողության մեջ մտապահելու համար, դ) Ջոն Բ. Ուոթսոնի տեսությունը, որը հայտնի դարձավ «պերիֆերիալիզմ» անվամբ, և դրա համաձայն՝ մտածողությունը տեղի է ունենում ոչ թե բուն ուղեղում, այլ ձայնային պերիֆերիկ վանդակում, և ե) անդրադարձ է կատարվել անգլիացի սոցիոլոգ Բասիլ Բերնսթայնի տեսակետներին, որը լեզուն ուսումնասիրել է որպես սոցիալական երևույթ:

Երկրորդ ենթագլխում՝ **Արաբականացման շարժման պայրմական հանգրվանները**, ներկայացված են արաբականացման շարժման մի քանի ալիքներ, որոնցից առաջինը արաբական նվաճումների հետևանքով ստեղծված ընդարձակ պետության մեջ արաբերենի արագ տարածումն է: Արաբերենին տիրապետելով՝ հպատակ ժողովուրդների ներկայացուցիչներն սկսեցին արաբերեն թարգմանել իրենց լեզուներով ստեղծված գիտական գրականությունը և դրանով իսկ իրենց գիտական միտքը ներմուծել արաբ մուսուլմանների հոգևոր գանձարան: Այդ քաղաքակրթությունների խառնուրդից ձևավորվեց արաբական բնույթ և իսլամական ոճ ունեցող մի նոր քաղաքակրթություն, որի պտուղները, ձևավորվելով վաղ օմայան շրջանում, հասունացան արբասյան դարաշրջանում, երբ Բաղդադը դարձավ իսլամական աշխարհի քաղաքակրթության կենտրոն: Այստեղ էին հավաքվել գիտության, մշակույթի, գրականության, տնտեսական և ֆինանսական աշխարհի ներկայացուցիչները, որն էլ այն դարձրեց քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն, որից դուրս եկան մեծաթիվ ոչ մուսուլման և ոչ արաբ գիտնականներ, փիլիսոփաներ, բանաստեղծներ, գրականագետներ: Նրանք առանձնապես նշանավորվեցին հունարենից, պարսկերենից, հնդկերենից և ասորերենից արված ուլազգրավ թարգմանություններով: Ձևավորված դպրոցների կապը մուսուլմանների հետ է՛լ ավելի ամրացավ Աբբասյան ժամանակաշրջանում: Դրանցից առավել հայտնի են Հառռանի, Մծբինի և Գունդիշապուհի դպրոցները, որոնք մանրամասն ներկայացված են սույն ենթագլխում: Կենտրոնական իշխանության թուլացումը և մարզերի՝ կենտրոնից անջատվելը հանգեցրին նաև գրական արաբերենի կարևորության նվազմանը և մյուս լեզուների վերակենդանացման շարժումների առաջացմանը, մանավանդ որ իսլամական աշխարհում իշխանությունն արդեն անցել էր ոչ արաբների, հիմնականում՝ թուրքերի

ձեռքը: Ինչպես հայտնի է, թյուրք սելջուկների պալատական լեզուն ոչ թե արաբերենն էր, այլ պարսկերենը, բուիների լեզուն ևս պարսկերենն էր, իսկ այյուբյաններինը Եգիպտոսում (1174-1353 թթ.) թյուրքերենն էր: Արաբերենն աստիճանաբար իր գրավչությունը կորցրեց ինչպես իշխանավորների, այնպես էլ մշակութային գործիչների համար:

Օսմանյան կայսրությունը, որն ամենաերկար կյանք ունեցած իսլամական պետությունն էր, կառուցվեց Աբբասյան խալիֆայության փլատակների վրա: Հպատակ երկրներում, ինչպիսիք էին Սիրիան և Իրաքը, օսմանյան տիրապետության շրջանում տիրում էին հետամնացությունը, աղքատությունն ու տգիտությունը: Անտեսված էր նաև արաբերենը՝ չնայած այն իսլամի կրոնական գրականության լեզուն էր: Այս ժամանակաշրջանում արաբերենն իր կարևոր դերը պահպանեց Հյուսիսային Աֆրիկայի երկրներում, մասամբ նաև Անդալուսիայում:

Հաջորդ փուլը գաղութատիրության շրջանն էր, երբ վիճակն ըստ էության չփոխվեց: Շարունակվեց լեզվական նույն երկատվածությունը, որից արաբական աշխարհը տառապում է առ այսօր: Սակայն այս շրջանում որոշ արաբ բարեփոխիչ իշխանավորներ ուսանողների պատվիրակություններ ուղարկեցին Եվրոպա՝ այնտեղ կրթություն ստանալու և եվրոպական գիտության ու մշակույթի ձեռքբերումներն ի նպաստ հայրենիքի զարգացման ներդնելու նպատակով: Եգիպտոսում նման նախաձեռնությամբ մասնավորապես հանդես եկավ Մուհամմադ Ալի փաշան (1769-1849): Միանշանակ կարելի է փաստել, որ եթե չլինեին այդ ուղղությամբ գործադրված ջանքերը, ապա այս շրջանում ևս արաբերենով գիտական որևէ եզր չէր ստեղծվի՝ լիներ այն թարգմանված, թե նորաստեղծ: Այդ նախաձեռնության արդյունքում իրականացված թարգմանությունների միջոցով արաբ թարգմանիչներն ու գիտնականները կարողացան վերակենդանացնել արաբաիսլամական բժշկության տերմինաբանությունը: Դրանք հնարավորություն տվեցին հարստացնելու արաբերենը՝ նախորդ դարերում անհայտ գիտական նոր եզրեր մտցնելով:

Երրորդ ենթագլխում՝ **Գլոբալիզացիան և արաբերենի խնդիրները**, անդրադարձ է կատարվում «գլոբալիզացիա» հասկացության սահմանմանը, ներկայացվում են այն ներքին և արտաքին մարտահրավերները, որոնց մշտապես դիմակայում է



արաբերենը, առանձնացվում են երկլեզվությունը (դիգլոսիան) և «արաբիզի» հիբրիդ լեզուն, որն օգտագործում են արաբները սոցիալական ցանցերում: Այս լեզուն անվանվում է նաև «ֆրանկո-արաբերեն», «արաբթինի» կամ արաբականացված անգլերեն: Արաբիզի լեզվի կարևորագույն վտանգներից է այն, որ երիտասարդները հեռանում են գրական արաբերենից՝ գրավոր խոսքում օգտագործելով անգլերեն տառերը: Արդյունքում նրանք դադարում են տիրապետել արաբերենի ուղղագրությանը, անտեսում արաբերենի քերականական կանոնները:

**Երկրորդ գլուխը՝** վերնագրված «**Լեզվական քաղաքականությունն ու գիտական ոլորտի արաբականացումը արաբական երկրներում**», բաղկացած է չորս ենթագլուխներից: Առաջինում՝ **Լեզվական քաղաքականություն և լեզվական պլանավորում**, ներկայացվում են լեզվական քաղաքականություն և լեզվական պլանավորում հասկացությունների սահմանումները, տրվում են լեզվական պլանավորման 12 տեսակները, որոնք շրջանառության մեջ են դրվել Է. Հաուգենի կողմից 1959 թ. այս եզրույթի կիրառումից հետո , անդրադարձ է կատարվում լեզվական պլանավորման գործընթացին ու նպատակներին, լեզվաբանի դերին լեզվական քաղաքականության և պլանավորման գործընթացում և աղյուսակով ներկայացվում է լեզվաբանի և քաղաքական գործչի դերը լեզվական պլանավորման գործընթացում:

Այս գլխի երկրորդ՝ **Արաբական երկրների գործադրած ջանքերը գիտությունների արաբականացման ուղղությամբ**, ենթագլխում ներկայացվում են այն հիմնական ուղղությունները, որոնցով արաբական երկրներում իրականացվում են գիտությունների արաբականացմանն ուղղված ջանքերը: Դրանք են. ա) արաբերեն եզրերի զարգացումը՝ դրանց ստեղծման կամ արաբականացման միջոցով. թվարկվում են այն հիմնական կազմակերպություններն ու հաստատությունները, որոնք մինչ օրս որոշակի ներդրում են ունեցել գիտակրթական ոլորտի արաբականացման գործում: Դրանք են LEXAR բառային տվյալների բազան Ռաբատում, Basem տերմինաբանության սաուդյան ավտոմատացված բանկը, Տերմինաբանական տեղեկատվության բազան (SSF) Թունիսում, Լեզվական ակադեմիայի տերմինաբանական բանկը Հորդանանում, Տերմինաբանական դիտարանը (աստղադիտարանը), բ) լեզվական

ակադեմիաների ստեղծումը և գործունեությունը, գ) արաբականացման համակարգման գրասենյակը, ներկայացվում է գրասենյակի հրատարակած բառարանների ցանկը:

Երրորդ ենթագլխում՝ **Արաբերենը գիտական նոր եզրերով հարստացնելու միջոցները**, անդրադարձ է կատարվում գիտական և քաղաքակրթական նոր եզրերով արաբերենը հարստացնելու խնդրի լուծմանը հետևյալ միջոցներով՝ ա) ածանցյալ բառակազմական կաղապարների միջոցով. այս եղանակն օգտագործում է արաբերենի ձևաբանությանը հատուկ բառակազմական կաղապարների կանոնավոր ածանցումների հնարավորությունները՝ նոր իմաստներ ստեղծելու համար, որը խթանում է լեզվի կենսունակությունը և տևակայուն զարգացումը: Լեզվաբաններից շատերը կարծում են, որ այն բառաստեղծման առկա տարբերակներից ամենանախընտրելին է, բ) արաբականացման միջոցով, որը նույնպես լեզվի հարստացման միջոցներից մեկն է: Դա ոչ արաբերեն բառի փոխառումն է որոշ հնչյունափոխությամբ, որպեսզի այն համապատասխանի արաբական արտասանությանը: Հասկացությունների արաբացման այս տեսակը բանավեճ է առաջացրել լեզվագիտական շրջանակներում: Ոմանք կարծում են, որ արաբերենն ունակ է ամբողջությամբ ընդգրկել արդի գիտությունների հասկացակազմը, իսկ ուրիշները պնդում են, որ գիտության արագընթաց զարգացումը հնարավորություն չի տալիս արաբերենին արդի տերմինաբանությունն ամբողջությամբ արտահայտելու: Սույն ենթագլխում մանրամասնորեն ներկայացված են 1938 թվականին Լեզվական ակադեմիայի անդամներ Ալի Օմար ալ-Իսքանդարիի և Աբդ ալ-Կադիր ալ-Մադրիբիի նախաձեռնությունները, որոնք զգալի ազդեցություն ունեցան Ակադեմիայի որոշումների վրա: Անդրադարձ է արվում նաև Լեզվական ակադեմիայի դիրքորոշմանը, ըստ որի՝ տերմինաբանության հիմնախնդրի լուծման հարցում արաբացումը շարունակում է մնալ բանավեճերի առարկա:

Չորրորդ ենթագլուխը՝ **Արաբական երկրներում գիտությունների ոլորտի արաբականացման գործընթացի խոչընդոտները**, ներկայացվում են այն գործոնները, որոնք հանգեցրել են արաբական երկրներում այդ կարևորագույն գործընթացի ձախողմանը: Դրանք են՝ ա) քաղաքական գործոնը, որը կարելի է բաժանել երկու մասի՝ ներքին և

արտաքին քաղաքական պատճառներ, բ) պատշաճ լեզվական պլանավորման բացակայություն, գ) նյութական միջոցների սակավություն և գիտական հետազոտությունների նկատմամբ ուշադրության պակաս, դ) արաբականացման ոլորտում մասնագետների բացակայություն, այդ նպատակի համար անհրաժեշտ փորձի պակաս, ե) գիտությունների ոլորտի արաբականացման կիրառմանն ու գործադրմանը կտրուկ դեմ արտահայտվող լեզվակիրների ստվար շերտի առկայություն: Արաբականացման հակառակորդները բերում են հետևյալ փաստարկները՝ 1. Արդի դարաշրջանում գիտության լեզուն անգլերենն է. 2. Բնագիտական առարկաների դասավանդման մեջ անգլերենի կիրառումը համարվում է ամենաարագ միջոցը ուսանողի՝ այդ լեզվին տիրապետելու և գիտական առաջընթացին համաքայլ ընթանալու համար. 3. Արաբերենով գրքերի և աղբյուրների սահմանափակությունը, մեթոդական անկատարությունն ու հրատարակման վատ որակը. 4. Լեզվական ակադեմիաների կողմից առաջարկած որոշ եզրերի տարօրինակությունը կամ դժվար ընկալելիությունը, ինչպես նաև այն, որ այդ եզրերի մեծ մասը մինչ այժմ չի թարգմանվել արաբերեն: Արաբական երկրներում գիտությունների արաբականացման խնդիրը պահանջում է բոլորի համար պարտադիր հասարակական համաձայնության կամ քաղաքական որոշման ընդունում, որը կպարտադրի տեխնիկական ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր անդամներին արաբերենն ընդունել որպես դասավանդման լեզու: Նման որոշման ընդունմանը զուգահեռ՝ պարտադիր պայման է նաև արաբականացման քաղաքականությունը ընդունելուն հանրությանը նախապետրաստելը՝ փորձելով փոխկապակցել գիտությունների արաբականացման խնդիրն ինքնության հետ:

**Երրորդ՝ «Բժշկագիտական առարկաների արաբականացման փորձը և հեռանկարները արաբական երկրներում. գործնական հետազոտություն (Case Study)», վերնագրված գլուխը նպատակ ունի ներկայացնելու արաբական տարբեր երկրների առաջատար համալսարանների բժշկական ֆակուլտետներում դասավանդման լեզվական պատկերը և բաղկացած է չորս ենթագլուխներից: Դրանցից առաջինում՝ **Բնագիտական առարկաների դասավանդման արաբականացումը արաբական երկրներում 20-րդ դարի երկրորդ****

**կեսին**, ներկայացվում են այդ գիտակարգերը օտար լեզվով դասավանդելու բացասական հետևանքներից առավել ակնհայտները, որոնք են՝ լեզվական հակամարտությունը, արժանապատվության պակասը, ինքնության կորստի վտանգը, ուղեղների արտահոսքը: Դրանց դասավանդումը ոչ արաբերենով վտանգավոր է երկու տեսանկյունից. առաջինն օտար լեզվի՝ մայրենիի տեղը զբաղեցնելն է, երկրորդը՝ մայրենի լեզվի սոցիալական դերակատարության նվազումը<sup>1</sup>, երբ թափանցած օտար լեզուն դառնում է առաջընթացի, գիտության և նրբաճաշակության լեզու, իսկ բուն մայրենին՝ հետամնացի, գավառայինի խորհրդանիշ: Արաբականացման հրամայականն այս համատեքստում ստանում է բացահայտ քաղաքական նշանակություն:

Այս գլխի երկրորդ ենթազխում՝ **Արաբական երկրներում գիտությունների արաբականացման առջև ծառայած առաջնային խնդիրները**, փորձ է արվում առանձնացնել գիտությունների ոլորտի արաբականացման առջև ծառայած առաջնային խնդիրներից մի քանիսը, որոնք ներկայացված են հետևյալ կետերով. ա) ամրապնդել ազգային միասնությունը և մշակութային կապերն արաբական երկրների միջև, բ) համատեղել ավանդույթը և արդիականությունը, գ) ամրապնդել համալսարանների և հասարակության կապը, դ) հետևողականորեն զարգացնել արաբական աշխարհի գիտական մշակույթը և միավորել ջանքերն այդ ուղղությամբ, ե) օգնել հետազոտողներին հասկանալու և ընկալելու արաբալեզու գիտական նյութը, զ) շարունակել օտար լեզուների դասավանդումը: Արաբականացման քաղաքականության հիմնական նպատակն է վերոնշյալ մարտահրավերներին դիմագրավելը: Լինելով գլխավորապես քաղաքական խնդիր՝ այն անմիջականորեն կապված է ներարաբական քաղաքական հարաբերությունների բարդ խնդիրների հետ, բայց միաժամանակ կարող է դառնալ միավորիչ այնպիսի հարց, որն իր դրական ազդեցությունը կարող է ունենալ համարաբական քաղաքական կարևոր այլ խնդիրների լուծման վրա:

Երրորդ՝ **Արաբական երկրներում բնագիտական առարկաների արաբականացման արդի փորձը**, ենթազխում անդրադարձ է կատարվում այն հարուստ ժառանգությանը և մեծ ներդրմանը, որ

---

1 عبد الله العروى : ثقافتنا فى ضوء التاريخ ، المركز الثقافي العربي ، بيروت ، الطبعة الثانية 1988، ص. 214 .

միջնադարում ունեցել են արաբները բժշկագիտության ասպարեզում: Հիմնվելով արաբալեզու այդ հսկայական ժառանգության վրա՝ արաբական տարբեր երկրներում բազմաթիվ փորձեր են արվել՝ այդ ոլորտը վերաարաբականացնելու ուղղությամբ: Սույն ենթագլխում փորձ է արվում ներկայացնելու դրանք՝ ըստ երկրների: Արաբական երկրներում բնագիտական և ճշգրիտ գիտությունների ոլորտի արաբականացման գործընթացն իրականացվել է տարածամանակ ու փոփոխական հաջողություններով: Արաբականացման տեսանկյունից առավել բարդ են համարվում բժշկական և տեխնիկական ոլորտները: Ներկայումս արաբական գրեթե բոլոր երկրների համալսարաններում բժշկական գիտությունները դասավանդվում են օտար լեզուներով, հիմնականում՝ անգլերեն և ֆրանսերեն: Սիրիան թերևս արաբական միակ երկիրն է, որը բացառություն է կազմում այդ ցանկում, քանի որ այստեղ առ այսօր կրթական բոլոր մակարդակներում որպես դասավանդման լեզու օգտագործվում է արաբերենը: Արաբական մի շարք երկրներում նույնպես փորձեր են կատարվել բժշկագիտության ոլորտի արաբականացման ուղղությամբ, սակայն որևէ լուրջ արդյունք չեն գրանցել և ներկայումս դադարեցվել են: Նման պատկերը հաճախ արդարացվում է արաբերենի՝ գիտության առաջընթացին համընթաց քայլելու անկարողությամբ, համապատասխան ուսումնական նյութերի բացակայությամբ և այլն, սակայն Դամասկոսի համալսարանի փորձը ցույց է տալիս, որ այդ գիտակարգերի դասավանդումը արաբերենով ոչ միայն իրատեսական է, այլև ավելի բարձր արդյունքներ է ապահովում, քան օտար լեզուներով դասավանդումը:

**Չորրորդ՝ Արաբական երկրներում բժշկագիտության դասավանդման ներկա վիճակը և դրա արաբականացման փորձը,** ենթագլխում անդրադարձ է կատարվում արաբական առաջատար համալսարանների բժշկական ֆակուլտետներում տիրող իրավիճակին՝ ըստ դրանցում դասավանդման լեզվի: Այստեղ մանրամասնորեն վերլուծված են հետազոտության ընթացքում կատարված երկու հարցումներ: Դրանցից առաջինն անց էր կացվել առցանց, սիրիական տարբեր համալսարանների բժշկության ֆակուլտետների ուսանողների շրջանում և նպատակ ուներ պարզելու, թե բժշկակագիտական առարկաների արաբերենով դասավանդումն ինչ խնդրներ է առաջացնում

ուսանողների առջև, որքանով է նպատակահարմար այս գիտակարգի արաբականացումը: Իսկ երկրորդ հարցումն անց է կացվել արաբական երեք երկրների՝ Եգիպտոսի, Սիրիայի և Ալժիրի համալսարանների բժշկական ֆակուլտետների ուսանողների շրջանում (հիսունական ուսանող յուրաքանչյուր երկրից) և նպատակ ուներ համեմատելու բժշկական գիտությունների՝ երեք տարբեր լեզուներով դասավանդման արդյունքները, վերհանելու դրանց դրական և բացասական կողմերը, պարզելու՝ նշված գիտակարգի արաբականացումը որքանով է արդարացված:

Ատենախոսության վերջում ներկայացվում են հետևյալ հիմնական **եզրակացությունները.**

1. Գիտությունների արաբականացման հայեցակարգը ոչ միայն լայն հնարավորություններ է տալիս գիտական եզրերն այլ լեզուներից արաբերեն թարգմանելու, այլև արաբերենը գիտական մտքի, վերլուծության և հետազոտության լեզու դարձնելու համար, որպեսզի այն սպառող լեզվից դառնա արտադրող լեզու:

2. Գիտությունների լեզուն շարունակաբար օտար լեզուն համարելը և այդ համակարգում արաբերենի դերի անտեսումը հանգեցնում է արաբերենի՝ որպես գիտության լեզվի մեկուսացմանը: Արաբական հասարակության մի մասը գիտությունների օտարալեզու «մատուցումը» պատճառաբանում է արաբերենի՝ որպես գիտության լեզվի լճացմամբ և դրա՝ համաշխարհային գիտական առաջընթացին համընթաց քայլելու անկարողությամբ. դա հանգեցնում է օրեցօր աճող մշակութային երկատման արաբերենի ու գիտության միջև, և արաբական հասարակությունը վերածվում է «կախյալ հասարակության»՝ իր ստեղծագործական ներուժը զարգացնելու փոխարեն: Այստեղ հիմնախնդիրն այն է, որ իրականում արաբերենը չի կորցրել իր առանձնահատկություններն ու արժեքը: Արաբները դեռևս խոր միջնադարում թարգմանել են հունական, հնդկական և պարսկական հնագույն մշակույթների գիտական ստեղծագործությունները՝ միաժամանակ աչքի ընկնելով սեփական ստեղծագործ մտքով ու արժեքավոր աշխատություններով:

3. Արաբականացումն իբրև երևույթ մշտապես ուղեկցել է արաբ հասարակության զարգացմանը պատմական գրեթե բոլոր հանգրվաններում՝ սկսած իսլամի ծագման շրջանից և միջնադարյան

արաբամուսուլմանական մշակույթի ծաղկման դարերից մինչև լեզվական քաղաքականության մերօրյա հիմնախնդիրները: Այդ առումով «արաբականացում» հասկացությունն ավելի լայն պատմամշակութային ֆենոմեն է, և ժամանակակից արաբական երկրներում այդ ուղղությամբ կատարվող միջոցառումներն ընդամենն այդ լայն կոնցեպտի արդիական դրսևորումներ են:

4. Բնագիտական առարկաների դասավանդումը ոչ արաբերենով վտանգավոր երևույթ է, որն արդեն մոտ մեկուկես դար մեծ տարածում է գտել արաբական գրեթե բոլոր երկրներում: Լինելով գլխավորապես քաղաքական խնդիր՝ այդ երևույթն անմիջականորեն կապված է ներարաբական քաղաքական բարդ հարաբերությունների հետ, բայց միաժամանակ այդ խնդրի լուծումը կարող է դառնալ միավորիչ այնպիսի հարց, որն իր դրական ազդեցությունը կունենա համաարաբական քաղաքական այլ կարևոր խնդիրների լուծման վրա:

5. Արաբական երկրներում բնագիտական ու ճշգրիտ գիտությունների ոլորտի արաբականացման գործընթացն իրականացվել է տարաժամանակ և փոփոխական հաջողություններով: Արաբականացման տեսանկյունից առավել բարդ են համարվում բժշկական և տեխնիկական ոլորտները: Ներկայումս արաբական գրեթե բոլոր երկրների համալսարաններում բժշկական գիտությունները դասավանդվում են օտար լեզուներով, հիմնականում՝ անգլերեն և ֆրանսերեն: Սիրիան թերևս արաբական միակ երկիրն է, որը բացառություն է կազմում այդ ցանկում, քանի որ այստեղ մինչ օրս կրթական բոլոր մակարդակներում որպես դասավանդման լեզու օգտագործվում է արաբերենը: Դամասկոսի համալսարանի փորձը ցույց է տալիս, որ այդ գիտակարգերի արաբերեն դասավանդումը ոչ միայն իրատեսական է, այլև ավելի բարձր արդյունքներ է ապահովում, քան օտար լեզուներով դասավանդումը:

6. Գիտական տերմինաբանության արաբականացման տարաբնույթ, երբեմն արժեքավոր փորձերը, այդ նպատակներով ստեղծվող կազմակերպություններն ու հաստատությունները կարևոր նշանակություն ունեն խնդրի լուծման մեթոդաբանության մշակման և իրագործման ուղիները որոշարկելու տեսանկյունից:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ արաբական երկրներում գիտությունների արաբականացման խնդիրը պահանջում է այս ոլորտում քաղաքական հստակ դիրքորոշում, որը պարտադիր կլինի բոլորի համար, և որը արաբական համալսարաններում կհանգեցնի արաբերենով դասավանդելուն: Դրան զուգահեռ՝ պարտադիր պայման է նաև հանրությանը նախապատրաստելը արաբականացման քաղաքականության ընդունմանը՝ փորձելով շեշտել գիտությունների արաբականացման ու ազգային ինքնության խնդիրների միջև անքակտելի կապը: Արաբականացման գիտական նշանակությունը պետք է լինի արաբերենի կապակցումը ժամանակակից գիտությունների հետ՝ նկատի ունենալով այս լեզվի հարուստ գիտական ժառանգությունն ու պատմությունը, որը արաբական հասարակության վերածննդի գլխավոր նախապայմանն է: Այդ մեծ ներուժի օգտագործումն արաբական հասարակություններին կարող է վերստին հասցնել գիտական առաջընթացի, նրանց դուրս բերել լճացումից ու արժանավայել տեղ ապահովել զարգացած ազգերի կողքին: Այն գիտական առաջընթացը, որ ներկայումս նկատվում է արաբական հասարակության մեջ, իրական չէ, քանի որ թե՛ արդյունաբերական և թե՛ տեխնոլոգիական «նորարարություններն» այստեղ կատարվում են Արևմուտքից «փոխառված» գիտելիքների ու մեթոդների կրկնօրինակման հաշվին, որը չի կազմում նրա հասարակական-մշակութային և ինտելեկտուալ «կազմակերպվածության» օրգանական մասը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ արաբականացման գիտական նշանակությունը մեծ է նաև ազգային մակարդակում: Եթե ազգը ժամանակակից գիտությունները զարգացնում է սեփական լեզվով, ապա դրանով մեծապես նպաստում է նաև հասարակության առաջընթացին ու գիտական նոր հորիզոններ է բացում իր առաջ՝ խթանելով սեփական ստեղծագործ մտքի զարգացումը:

Իհարկե, հարկ է շեշտել նաև, որ եթե մենք կոչ ենք անում համալսարաններում բնական և տեխնիկական գիտությունները դասավանդել արաբերեն, դա չի նշանակում, որ անտեսում ենք օտար լեզուները. խորապես գիտակցում ենք, որ միայն լեզուների միջոցով է հնարավոր ծանոթանալ համաշխարհային մշակույթին, գիտատեխնիկական նորարարություններին ու նորամուծություններին: Արաբականացման հրամայականը հիմնվում է այն գաղափարի վրա, որ անհրաժեշտ է խորացնել արաբերենի ուսուցումն ու է՛լ ավելի զարգացնել



այն, քանի որ այդ գործընթացն ունի ազգային, լեզվական և գիտական մեծ նշանակություն: Այն կապված է արաբական հասարակության ժամանակակից կյանքի ու գալիքի հետ. հասարակությունը պետք է ազատվի մշակութային և գիտական «կախվածությունից» և հաղթահարի լճացումը՝ վերականգնելու համար իր նախկին դիրքն ու համբավը գիտության ոլորտում և իր հաստատուն տեղը զբաղեցնի զարգացած ազգերի շարքում:

**Հավելվածներում ներկայացված են.**

- 1) արաբական տարբեր համալսարանների բժշկական ֆակուլտետները՝ ըստ դրանցում դասավանդման լեզվի.
- 2) դասավանդման լեզվի վերաբերյալ Սիրիայի, Եգիպտոսի և Ալժիրի մի քանի համալսարանների բժշկական ֆակուլտետների ուսանողների շրջանում անցկացված հարցման արդյունքները:

**Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Արաբերեն լեզվի ակադեմիայի՝ գիտական տերմինաբանության հիմնախնդրի լուծմանն ուղղված գործունեության շուրջ, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն և բանասիրություն», 1(38), Երևան, 2016, էջ 22-28:
2. Արաբական երկրներում բժշկագիտության արաբականացման փորձեր, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն և բանասիրություն», 1(40), Երևան, 2017, էջ 700-715:
3. Արաբական երկրներում գիտությունների ոլորտի արաբականացման գործընթացի խոչընդոտները, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն և բանասիրություն», 1(40), Երևան, 2017, էջ 716-725:
4. Բնագիտական առարկաների դասավանդման արաբականացումը արաբական երկրներում 20-րդ դարի երկրորդ կեսին, «Արաբագիտական ուսումնասիրություններ», հատոր 8, Երևան, 2016, էջ 140-153:

5. Արաբական երկրներում գիտությունների արաբականացմամբ զբաղվող կազմակերպություններն ու արաբականացման հեռանկարները, «Արաբագիտական ուսումնասիրություններ», հատոր 9, Երևան, 2017, էջ 1-10:
6. Արաբականացման շարժման պատմական հանգրվանները, «Արաբագիտական ուսումնասիրություններ», հատոր 9, Երևան, 2017, էջ 11-26:

**Мерват Джума Абдаллах Осман**  
**Литературный арабский язык в эпоху глобализации: проблемы**  
**языковой политики с типологической точки зрения**

Диссертация на соискание учёной степени кандидата филологических наук по специальности 10.02.02 «Общее и сравнительное языкознание».

Защита состоится 29-го января 2018 г., в 15:00 часов, на заседании специализированного совета 019 ВАК по лингвистике, действующего при Институте языка им. Г.Ачаряна НАН РА, по адресу: 0015, г. Ереван, ул. Григор Лусаворич, 15.

**РЕЗЮМЕ**

Арабские ученые и представители интеллигенции, полностью сознавая важное значение движения за арабизацию, регулярно ставили вопрос о необходимости преподавания естественнонаучных дисциплин на арабском языке. Во многих арабских странах на эту тему проводились конференции и семинары, по итогам которых принимались решения, способствующие этому процессу, в том числе намечались меры для проведения этих решений в жизнь. Следствием этой деятельности стали шаги, направленные на координацию усилий языковых академий разных стран по созданию специальных центров по переводу многочисленных терминов были на арабский язык, которые во многом способствовали процессу арабизации естественных наук. Начиная с 80-90-х гг. прошлого века движение за арабизацию добилось существенного прогресса. В результате этого в университетах некоторых арабских стран (Сирии, Судана, Ирака, Ливии и т.д.) были предприняты серьезные попытки преподавания естественных дисциплин на арабском языке. К сожалению, с конца 1990-х гг. движение за арабизацию постепенно пошло на спад. Это было связано с американским вторжением в Ирак и чередой политических и экономических кризисов в арабском мире.

Целью исследования является попытка сопоставительного анализа особенностей языковой политики в различных арабских странах путем выявления факторов, влияющих на ее разработку и реализацию.

Основными задачами исследования являются:

(а) оценка нынешнего состояния арабского языка в контексте языковой и культурной глобализации и выявление проблем, с которыми он сталкивается в современную эпоху;

(б) определение проблем, связанных с взаимосвязью языка и национальной идентичности, которые возникают в результате преподавания естественно-научных дисциплин на иностранных языках;

в) представление современного состояния языковой политики в арабских странах;

е) выявление угроз, которые могут вызвать преподавание естественно-научных дисциплин на иностранных языках.

Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и двух приложений.

**Во введении** представлены основные положения диссертации, методологическая база исследования, обосновываются актуальность темы, цель и задачи исследования, дается краткий обзор использованной литературы.

**В первой главе** («Арабский язык в эпоху глобализации») рассматривается связь арабского языка и арабской идентичности, угрозы, возникающие для сохранения идентичности, представляется история арабизации научной сферы начиная эпохи Арабского халифата, когда арабский являлся мировым языком науки, до наступления эпохи глобализации, когда в подавляющем большинстве арабских стран он был оттеснен на второй план. Рассматриваются вопросы изменения роли арабского языка в эпоху глобализации, вызовы, стоящие перед ним сегодня.

**Во второй главе** («Языковая политика и арабизация научной сферы в арабских странах») рассматриваются понятия «языковая политика» и «языковое планирование», представляются усилия, предпринимаемые в арабских странах в направлении арабизации: основные препятствия на этом пути, а также способы обогащения арабского языка новыми научными терминами.

**В третьей главе** («Опыт и перспективы арабизации медицинских дисциплин: практическое исследование (case study)») изучается современный опыт арабизации естественнонаучных дисциплин в арабских странах, на примере преподавания дисциплин медицинских специальностей представляется существующее положение дел в этой области.

**В заключении** подводятся итоги проведенного в рамках диссертации исследования.

**В приложениях** представлены данные о языке преподавания на медицинских факультетах различных арабских стран, а также результаты опроса относительно выбора языка преподавания среди студентов нескольких университетов Сирии, Египта и Алжира.

**Mervat Gomaa Abdallah Osman**  
**Literary Arabic Language in the era of Globalization: the problems of  
language policy from the typological aspect**

Dissertation for the degree of candidate of philological sciences, speciality 10.02.02 – “General and Comparative Linguistics”.

The defense will take place on January 29, 2018, at 15:00, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the Hrachya Acharyan Institute of Language of the National Academy of Sciences of the Republic of Armenia (0015, Yerevan, 15 Grigor Lusavorich street).

**Summary**

Arab scholars and intellectuals, in general, fully aware of the importance of Arabization movement, made continuous appeals, stressing the need of teaching natural sciences in Arabic. As a result, in many Arab countries very important conferences and seminars have been held, where decisions have been made significantly contributing to this process and appropriate measures have been taken to implement these decisions. At the same time it led to the unification of Arab language academies, which jointly set up special centers where a number of Arabic scientific terms were translated contributing to the process of Arabization. Since the late 80-90's, Arabization movement had a considerable progress, resulting in teaching natural sciences in Arabic in some Arab countries' (Syria, Sudan, Iraq, Libya, etc.) universities. Unfortunately, in the late 1990s Arabization movement gradually declined because of the Iraq- American invasion of the Arab world with various political and economic crises. The most dangerous thing is that the Arabization movement is neglected and sometimes even rejected by the Arab society.

The purpose of the research is to comparatively analyze the peculiarities of language policy in various Arab countries by identifying factors that affect its development and implementation.

The main objectives of the research are:

(a) to evaluate the current state of Arabic in the context of linguistic and cultural globalization and to find out the challenges it faces in the modern age;

(b) to identify issues related to the interconnection of the language and national identity that arise in the result of teaching of sciences in foreign languages;

(d) to present current language policies in Arab countries;

(e) to identify the dangers that may cause teaching of sciences in foreign languages.

**The structure of the dissertation.** The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and two appendices.

**The introduction** presents the main research issues and the methodological basis of the study, justifies the relevance of the topic, research objectives and purpose, also gives a brief description of the literature used.

**In the first chapter** ("Arabic in the era of globalization") a reference is made to the Arabic language and Arab identity and the dangers for preserving that identity. The history of Arabization of sciences is represented, from the Caliphate era when Arabic was the scientific language to the globalization era, when the vast majority of Arab countries pushed into the background exposed to many dangers. A reference is made to the era of globalization, the changing role of Arabic, the challenges that the Arabic language faces.

**The second chapter** ("Language policy and Arabization of Sciences in the Arab countries") examines the concepts "language policy" and "language planning". The efforts of the Arab countries for the Arabization movement, the obstacles that they face, as well as the ways to enrich the Arabic scientific terms are represented.

**The third chapter** ("Arabization experience of Medical subjects and perspectives of Arab countries, practical research (case study)") studies the modern example of the Arabization of Natural Sciences in Arabic countries and based on medical science teaching its present state is portrayed.

The results of the dissertation are summarized in the concluding statements.

**Appendices** provide data on the language of instruction in the Medical faculties of various Arab countries, as well as the results of the survey on the choice of the language of instruction among students from several universities in Syria, Egypt and Algeria.